

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԵՐԵՎԱՆ 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՌԵԿՏՈՐԻ ԽՈՍՔ	3
ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	5
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (ՃՇՀԱՀ) ՄԱՍԻՆ	5
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	11
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ	17
ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ	18
ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ	19
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ	22
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ	22
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	23
ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ	24

ՌԵԿՏՈՐԻ ԽՈՍՔ



*Գագիկ Շահաբեկի Գալստյան
Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարանի
ռեկտոր, տեխնիկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*

Միբելի՝ բարեկամ, ողջունում եմ բարձրագույն կրթություն ստանալու նպատակով Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանն ընտրելու Ձեր որոշումը: Կրթական բազմազան ծառայությունների և բարձր մրցակցության ներկա պայմաններում բուհն ընտրելու Ձեր որոշումը մեկ անգամ ևս փաստում է մեր համալսարանի բարձրորակ կադրեր պատրաստողի բարի համբավը:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը, շարունակելով համալսարանական կրթության իր բարի ավանդույթները, այսօր զարգացման բարձր նշակետ է սահմանել՝ ձգտելով համապատասխանել եվրոպական կրթական չափանիշներին: Համալսարանը իրականացնում է միջազգային արդյունավետ համագործակցության քաղաքականություն, կազմակերպում ուսումնառություն հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով, շրջանավարտներին շնորհվող դիպլոմները ճանաչվում են արտասահմանյան երկրներում, Ճարտարապետի դիպլոմը պաշտոնապես ճանաչվում է ֆրանսիականին համարժեք: Լիոնի ազգային բարձրագույն Ճարտարապետական դպրոցի հետ պայմանագիր է ստորագրվել ատենախոսությունների համատեղ ղեկավարման, պաշտպանության կազմակերպման և շնորհվող գիտական աստիճանի փոխադարձ ճանաչման վերաբերյալ:

Համալսարանը գնահատման գործընթաց է անցել Ֆրանսիական AERES հետազոտությունների և բարձրագույն կրթության գնահատման գործա-

կալության կողմից և արժանացել դրական գնահատականի:

Կրթական ծառայությունների որակի բարձրացմանը միտված բազմապիսի ու տարբեր ուղղություններով մեր քայլերն անընդհատ են և ընդգրկում են որակյալ կրթությունից մինչև հարմարավետ, բարեկարգ միջավայրի ստեղծում: Մեր բուհում շարունակվում են վերանորոգման և բարեկարգման աշխատանքները, և մենք արդեն ունենք համալսարանական գոտրիկ բակ, համակարգչային և տեխնիկապես հագեցած լսարաններ, որոնց թիվն օրըստօրե մեծանում է, համացանցային կապ ողջ բուհում, տարբեր փոխգործակցությունների արդյունքում՝ տարատեսակ կենտրոններ, կազմակերպությունների անկյուններ:

Միրելի՛ բարեկամ, վստահեցնում եմ, որ միասին հասնելու ենք նորանոր հաջողությունների, և այս առումով խիստ կարևորում եմ համագործակցությունը: Մեր գործունեությունն ուղղված է ի շահ մեր ուսանողների, ուստի ակնկալում եմ փոխադարձ ըմբռնում և ջանքերի համատեղում: Հավատացած եղեք, որ Ձեր բոլոր դրական նախաձեռնությունները կարժանանան բուհի ղեկավարության աջակցությանը:

ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1921թ. հոկտեմբեր - Երևանի ժողովրդական համալսարանում ստեղծվել է տեխնիկական ֆակուլտետ երկու մասնագիտություններով՝ ինժեներա-ճարտարապետական և ինժեներահիդրոտեխնիկական:

1930թ. հուլիս - հիմնադրվել է շինարարական ինստիտուտը երեք բաժիններով՝ ճարտարապետաշինարարական, հիդրոտեխնիկական և քիմիական:

1933թ. մարտ - կազմավորվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը՝ շինարարական և քիմիատեխնոլոգիական ֆակուլտետներով:

1989թ. հուլիս - ճարտարապետաշինարարական և ինժեներաշինարարական ֆակուլտետների հիման վրա կազմավորվել է Երևանի ճարտարապետաշինարարական ինստիտուտը:

2000թ. հուլիս - Երևանի ճարտարապետաշինարարական ինստիտուտը վերանվանվել է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան:

2014թ. հունվար - Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանը վերանվանվել է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (ՃՀՀԱՀ) ՄԱՍԻՆ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը (այսուհետ՝ Համալսարան) համալիր կրթօջախ է, որն իրականացնում է կրթություն, հետազոտություն, նախագծային փորձագիտական աշխատանքներ և այլ ծառայություններ՝

- ճարտարապետության,
- շինարարության,
- քաղաքային տնտեսության և էկոլոգիայի,

- դիզայնի և զբոսաշրջության,
- կառավարման և տեխնոլոգիայի բնագավառներում:

2008-2009 ուսումնական տարվանից Համալսարանն անցել է ուսուցման եռաստիճան համակարգի, որն առաջարկում է բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի ծրագրեր՝ համապատասխանաբար չորս, երկու և երեք տարի տևողությամբ:

Ներկայումս Համալսարանում ուսանում են 3564 ուսանող, որոնց թվում 319 արտասահմանցի:

Համալսարանում դասավանդում են բարձրակարգ մասնագետներ.

- ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ՝ 3,
- պրոֆեսորներ՝ 52,
- դոցենտներ՝ 132:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐՆ ՈՒ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ճարտարապետություն և դիզայն



2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՏՈՒԼՏԵՏ



- ❖ Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն
- ❖ Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում
- ❖ Տրանսպորտային ուղիների, միջոցների շինարարություն, կառավարում և դրանց շահագործում
- ❖ Շենքերի նախագծում
- ❖ Կադաստր և կիրառական գեոդեզիա

3. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ՖԱԿՏՈՒԼՏԵՏ


- ❖ Քաղաքային տնտեսություն և ջերմագազամատակարարում
- ❖ Անշարժ գույքի փորձաքննություն և կառավարում
- ❖ Անվտանգությունն արտակարգ իրավիճակներում
- ❖ Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում
- ❖ Բնապահպանական փորձաքննություն



- ❖ Շրջակա միջավայրի պահպանություն և բնական պաշարների արդյունավետ օգտագործում
- ❖ Թարգմանչական գործ (տեխնիկական թարգմանություն)՝ անգլերեն և հայերեն
- ❖ Թարգմանչական գործ (տեխնիկական թարգմանություն)՝ ռուսերեն և հայերեն

4. ԴԻԶԱՅՆԻ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

- ❖ Դիզայն
- ❖ Գեղեցիկ արվեստ
- ❖ Մերվիս
- ❖ Համակարգչային գեղարվեստական նախագծում



5. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ



- ❖ Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա
- ❖ Կառավարման տեղեկատվական համակարգեր
- ❖ Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (շինարարության ճյուղում)
- ❖ Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (քաղաքային տնտեսության, բնակարանային և կոմունալ ծառայությունների ճյուղում)
- ❖ Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (տրանսպորտի ճյուղում)
- ❖ Բնօգտագործման տնտեսագիտություն
- ❖ Հաշվապահական հաշվառում (շինարարության ճյուղում)

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համալսարանի ուսանողների իրավունքներն ու պարտականությունները սահմանված են «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի սովորողների ներքին կարգապահության կանոններում:

Ստորև համառոտ ներկայացվում են առավել կարևոր դրույթները:

1. Համալսարանի ուսանողն իրավունք ունի.

- Ուսումնական դասընթացներին և մասնագիտությանը համապատասխան մասնակցել իր կրթության բովանդակության ձևավորմանը՝ պահպանելով իր ուսումնակրթական ստորաբաժանման ծրագրի և բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները,
- Իր հայեցողությամբ, ըստ հակումների, նախասիրությունների և պահանջմունքների՝ ընտրել մասնագիտությունը և մասնագիտացումը, ուսուցման ձևը, Համալսարանում առկա հոսքը, ստանալ վճարովի կրթական ծառայություններ, զբաղվել գիտական հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում սահմանված կարգով ընդհատել կամ շարունակել ուսումնառությունը,
- Բացի ընտրած մասնագիտության պարտադիր ուսումնական դասընթացներից՝ վճարովի, իսկ Համալսարանի նախաձեռնությամբ՝ անվճար հիմունքներով յուրացնել ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է Համալսարանի ուսումնակրթական ստորաբաժանումներում, մասնակցել համալսարանում կարդացվող ցանկացած դասախոսության,
- Համալսարանում սահմանված կարգով փոխադրվել նախասիրած մասնագիտությամբ ուսուցման, տեղափոխվել, փոխադրվել մեկ այլ ուսումնական հաստատություն, ներառյալ՝ օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատություններ,

- Մասնակցել Համալսարանի կառավարման գործընթացին, ուսանողական, գիտահետազոտականա շխատանքներին, գիտաժողովներին, սեմինարներին, մրցույթներին, օլիմպիադաներին, ներհամալսարանական և արտահամալսարանական այլ միջոցառումներին,
- Քննաշրջանի քննությունների և ստուգարքների ժամանակացույցի կազմման ժամանակ ներկայացնել առաջարկություններ,
- Ազատ կերպով արտահայտել սեփական կարծիքն ու համոզմունքները, բողոքարկել Համալսարանի կառավարման մարմինների որոշումները, ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվածկարգով,
- Սահմանված կարգով ընդգրկվել համալսարանի և ստորաբաժանումների ղեկավար մարմիններում,
- Մասնակցել ուսուցման որակն ապահովող գործընթացներին և գնահատել պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը,
- Միավորվել ուսանողական հասարակական կազմակերպություններում (ուսանողական խորհուրդներ, ուսանողական գիտական ընկերություններ և այլ կազմակերպություններ), մասնակցել դրանց գործունեությանը,
- Սահմանված կարգով և չափով ստանալ պետական, անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակ, դրամաշնորհ, ինչպես նաև ուսանողական վարկ,
- Իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Համալսարանի կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

2. Համալսարանի ուսանողը պարտավոր է.

- մասնակցել ուսումնական պարապմունքներին: Սահմանված ժամկետներում կատարել ուսումնական առաջադրանքները՝ կրթական ծրագրերի պահանջները, ուսումնական պլանով, դասընթացների ծրագրերով և ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված գործառնություններն ու բոլոր այլ առաջադրանքները, դրանց հետ կապված հանձնարարությունները,
- ձեռք բերել և տիրապետել կրթական պետական չափորոշիչներին համապատասխան ու ապագա բարձրորակ որակավորմամբ մասնագետի համար անհրաժեշտ գիտելիքներին, հմտություններին և կարողություններին:

3. Համալսարանի սովորողը պարտավոր է պահպանել վարքագծի հետևյալ կանոնները.

- Իր վարքով և բարձր առաջադիմությամբ նպաստել Համալսարանի հեղինակության բարձրացմանը,
- չխախտել ուսումնական պարապմունքների ընթացքը: Պարապմունքների և դասամիջոցների ընթացքում Համալսարանի մասնաշենքերի միջանցքներում գտնվելու ժամանակ չաղմկել, ազատ պահել մասնաշենքերի աստիճանահարթակները և մուտքերը, չխոչընդոտել մարդկանց շարժը, ելքն ու մուտքը,
- բարեխղճորեն կատարել սովորողների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Համալսարանի կանոնադրության և սույն կանոնների պահանջները, Համալսարանի հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորի որոշումներն ու կարգադրությունները:

4. Սովորողի խրախուսումը.

- Համալսարանը խրախուսում է ակադեմիական բարձր առաջադիմություն և հասարակական աշխատանքներին գործուն մասնակցություն ցուցաբերող ու կարգապահ սովորողին,
- սովորողի կողմից ակադեմիական բարձր առաջադիմություն ցուցաբերելու, պարապմունքներին, գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին գործուն մասնակցության, համակցության կանոնները պահպանելու, բարձր վարքի, նախաձեռնությունների և ստեղծագործական ակտիվության համար սահմանվում են խրախուսանքի հետևյալ տեսակները՝
 - շնորհակալության հայտարարում,
 - միանվագ դրամական պարգևատրում,
 - պատվոգրով պարգևատրում,
 - հուշանվերով պարգևատրում,
- սովորողին խրախուսելու խրախուսանքի տեսակը դեկանի և սովորողների խորհրդի ներկայացմամբ որոշում է Համալսարանի ռեկտորը, որի մասին արձակում է հրաման,
- սովորողին խրախուսելու մասին հրամանը հրապարակվում է Համալսարանի կայքէջում:

5. Համալսարանում ուսումնական պարապմունքներն անցկացվում են սահմանված կարգով՝ հաստատված ուսումնական պլաններին, դասընթացների ծրագրերին և ուսումնական գործընթացի ժամանակացույցներին համապատասխան:

6. Ուսումնական դասացուցակը կազմվում է կիսամյակի համար և փակցվում է հաջորդ կիսամյակն սկսվելուց ոչ ուշ, քան 5 աշխատանքային օր առաջ:

7. Հասարաններում, լաբորատորիաներում գործնական պարապմունքներ անցկացնելու համար յուրաքանչյուր կուրս բաժանվում է ակադեմիական խմբերի և ենթախմբերի:

8. Յուրաքանչյուր ակադեմիական խմբում առավել կարգապահ և առաջադեմ ուսանողներից դասընկերներն ընտրում են ավագ: Խմբի ավագն ենթարկվում է ֆակուլտետի դեկանին, իր խմբին ներկայացնում է նրա բոլոր կարգադրությունների ու ցուցումների մասին:

Խմբի ավագի պարտականություններից են.

- դասախոսի հանձնարարությամբ ուսանողների հաճախումների անհատական հաշվառումը,
- ուսանողների չներկայանալու կամ ուշանալու մասին ֆակուլտետի դեկանին ամենօրյա հաղորդում ներկայացնելը՝ նշելով ուշացման պատճառները,
- դասատախտակում կատարված փոփոխությունների մասին ուսանողներին տեղեկացնելը,
- անորակ, ուսումնական պլանով նախատեսված ծրագրի խախտումով անցկացվող դասախոսությունների մասին ֆակուլտետի դեկանին իրազեկելը:

9. Յուրաքանչյուր ակադեմիական խմբի համար լրացվում է սահմանված ձևի մատյան, որը պահվում է ֆակուլտետի դեկանատում և ամեն օր, դասաժամերից առաջ, հանձնվում է դասախոսին, վերջինիս հսկողությամբ ավագը նշումներ է կատարում պարապմունքներին ուսանողների հաճախումների վերաբերյալ, իսկ դասախոսը արձանագրում է գործնական պարապմունքներին ուսանողների ակտիվությունը՝ համապատասխան գնահատումներով և ստորագրում դասամատյանում:

10. Համալսարանի մասնաշենքերում արգելվում են բարձրաձայն խոսակցությունը, աղմուկը, դասաժամերին՝ էլեկտրոնային սարքեր և բջջային հեռախոսներ օգտագործելը: Խստիվ արգելվում է ծխելը, ռգելից խմիչք օգտագործելը:

11. Սովորողի նյութական պատասխանատվությունը

Համալսարանի գույքը վնասելու դեպքում Սովորողը կարող է կրել նյութական պատասխանատվություն: Անչափահաս Սովորողի փոխարեն նյութական պատասխանատվություն է կրում նրա օրինական ներկայացուցիչը: Նյութական պատասխանատվության տեսակներն են

- վնասի փոխհատուցում,
- նույն տեսակի և որակի գույքի տրամադրում,
- վնասված գույքի վերանորոգում,
- դրամական փոխհատուցում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ

Բարձրագույն կրթության եվրոպական միասնական տարածքի ստեղծման նպատակով 1999 թվականի հունիսի 19-ին 29 եվրոպական երկրների կողմից ընդունվեց Բոլոնիայի հռչակագիրը, որով և հիմք դրվեց Բոլոնիայի գործընթացին:

Բոլոնիայի գործընթացի ուղղություններն են.

- Կրթական աստիճանների ճանաչումը (ոլորընթեռնելի և համադրելի աստիճանների համակարգի ընդունում),
- Բարձրագույն կրթության երեք աստիճանների (բակալավրիատ, մագիստրատուրա և դոկտորանտուրա) ընդունումը,
- Կրեդիտների համակարգի հիմնումը,
- ուսանողների, գիտամանկավարժական և վարչական կազմի շարժունությանն ապահովումը,
- մասնագետների պատրաստման որակի ապահովման ասպարեզում եվրոպական չափանիշների ընդունումը,
- բարձրագույն կրթության Եվրոպական չափայնության խթանումը,
- հարատև կրթության կարևորումը,
- բուհերի և ուսանողների ներգրավումը,
- Եվրոպական բարձրագույն կրթության գրավչության խթանումը,
- Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի և Եվրոպական հետազոտական տարածքի (ԵՀՏ) համահյուսումը:

Հայաստանը, միանալով Բոլոնիայի գործընթացին, որոշակի քայլեր է իրականացրել Եվրոպական բարձրագույն կրթության միասնական տարածքին ինտեգրվելու համար:

ՃՇՀԱՀ-ի կրթության երեք աստիճաններում ներդրվել է կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը (ECTS), բոլոր մասնագիտությունների ուսումնական պլանները կազմվել են կրեդիտային համակարգի հենքով (դասընթացները ներկայացված են կրթական մոդուլներով, որոնց ամրագրված են համապատասխան կրեդիտային արժեքներ):

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

Կրեդիտային համակարգն ուսուցման գործընթացի կազմակերպման, ուսումնառության արդյունքների ակադեմիական կրեդիտների միջոցով հաշվառման, կուտակման և փոխանցման համակարգ է, որում համապատասխան որակավորումը շնորհվում է ուսումնական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի կուտակումից հետո:

Կրեդիտը դասընթացով կամ կրթական այլ մոդուլով նախանշված կրթական արդյունքներին հասնելու համար ուսանողից պահանջվող ուսումնական բեռնվածության չափման պայմանական միավոր է: Կրեդիտը չափում է միայն ուսումնական բեռնվածությունը և չի ներառում կրթական ծրագրի այս կամ այն բաղադրամասի յուրացման որակը, դրա մակարդակը կամ բարդության աստիճանը, բովանդակությունը և այլն: Ուսանողը վաստակում է համապատասխան կրեդիտների քանակը տվյալ կրթական մոդուլը հաջողությամբ հանձնելուց հետո:

Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը (ECTS) իրենից ներկայացնում է համաեվրոպական միասնական կրեդիտային համակարգ, որն արտահայտում է մեկ ուսումնական տարում ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը 60 ակադեմիական կրեդիտներով: Այն նախատեսված է Բարձրագույն կրթության եվրոպա-

կան տարածքում ուսանողների կրթական արդյունքների արժևորման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ տեղափոխում ընդունին դարձնելու նպատակով:

Ուսուցման գործընթացը կրեդիտային համակարգով կազմակերպելիս հստակ սահմանվում են որակավորման շնորհման համար անհրաժեշտ կրեդիտների նվազագույն քանակը, այդ կրեդիտները ձևավորող դասընթացների և այլ բաղադրամասերի բովանդակային կազմը՝ ծրագրի պարտադիր և ընտրովի դասընթացների ցանկի տեսքով, դասընթացներին հատկացված կրեդիտները, ուսուցման ցիկլի նվազագույն և առավելագույն տևողությունները և այլն: Համաձայն բուհի կողմից սահմանված կարգի և ուսումնական ծրագրի պայմանների՝ ուսանողներն իրենք են որոշում՝ երբ, ինչ ժամկետներում և ինչ բովանդակությամբ հավաքել որակավորման համար անհրաժեշտ կրեդիտների պարտադիր նվազագույն քանակը, որիցի ետո կարող են հայցել համապատասխան որակավորում:

ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Պրակտիկայի բովանդակությունն ու տևողությունը սահմանվում են համապատասխան պետական կրթական չափորոշիչներով և համալսարանի ուսումնական պլաններով: Պրակտիկայի կազմակերպումն ուղղված է ուսանողների մասնագիտական գործունեության տիրապետմանը, որակավորման անընդհատ և հետևողական բարձրացմանը: Համալսարանում գործում են պրակտիկայի հետևյալ տեսակները.

- ուսումնական,
- արտադրական,
- նախաավարտական:

Պրակտիկայի կազմակերպումն իրականացվում է հետևյալ կերպ

- Պրակտիկայի բոլոր փուլերի ծավալն ու բովանդակությունը սահմանվում է պրակտիկայի ծրագրով, որը մշակվում է համապատասխան ամբիոնում և հաստատվում Համալսարանի ռեկտորի կողմից:
- Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կազմակերպություններում, ինչպես նաև Համալսարանի ստորաբաժանումներում:
- Կազմակերպությունում պրակտիկան իրականացվում է երկու կողմերի միջև կնքված համապատասխան պայմանագրով, համաձայն որի կազմակերպությունը պարտավորվում է տեղում կազմակերպել ուսանողների պրակտիկան:
- Ապագա գործատուների հետ պայմանագիր կնքած ուսանողներն արտադրական և նախաավարտական պրակտիկաներն անցկացնում են այդ կազմակերպություններում:
- Ուսումնական և արտադրական պրակտիկաները կարող են իրականացվել ինչպես անընդհատ շրջափուլով, այնպես էլ հաջորդելով տեսական դասընթացին՝ ըստ օրերի կամ շաբաթների, եթե ապահովվում է պրակտիկայի բովանդակության և տեսական դասընթացի միջև կապը:
- Կազմակերպությունն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ու աջակցում Համալսարանի ուսանողներին, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների գործընթացը լիարժեք կազմակերպելու համար: Ուսանողներին և դասախոսներին թույլատրվում է օգտվել կազմակերպության լաբորատոր սարքավորումներից, գրադարանից, տեխնիկական փաստաթղթերից, անհատական առաջադրանքների ու պրակտիկայի ծրագրի լիարժեք կատարման նպատակով:
- Պրակտիկայի անցկացման ժամկետները սահմանվում են Համալսարանի կողմից՝ համաձայն ուսումնական պլանների:

- Պրակտիկայի ծրագիրը կազմվում է հաշվի առնելով ուսանողների տեսական պատրաստվածությունը և ուսումնաարտադրական բազաների հնարավորությունները:
- Պրակտիկայի արդյունքում, սահմանված ժամկետի ավարտին, ուսանողը Համալսարանի կողմից նշանակված ղեկավարին ներկայացնում է հաշվետվություն:
- Պրակտիկայի գնահատականը համահավասար է տեսական ուսուցման գնահատականին և հաշվի է առնվում ուսանողների առաջադիմության ընդհանուր արդյունքների ամփոփման ժամանակ:
- Պրակտիկայի ծրագիրը հարգելի պատճառներով չկատարելու դեպքում ուսանողն այն լրացնում է ուսումի ց ազատ ժամերի հաշվին՝ ռեկտորատի համապատասխան որոշումից հետո: Անհարգելի պատճառներով պրակտիկայի ծրագիրը չկատարած ուսանողները համարվում են ակադեմիական պարտք ունեցող և հեռացվում են Համալսարանից՝ համաձայն գործող կարգի:
- Համալսարանի կողմից պրակտիկայի ղեկավար նշանակվում են արտադրությանը լավատեղյակ, փորձառու դասախոսներ, իսկ կազմակերպության կողմից՝ հմուտ մասնագետներ:
- Արտադրական և նախաավարտական պրակտիկայի ղեկավար նշանակվում են համապատասխան թողարկող ամբիոնների դասախոսները:
- Պրակտիկայի ծրագրով նախատեսված էքսկուրսիաների ծախսերն իրականացվում են Համալսարանի միջոցների հաշվին, որոնք նախատեսվում են Համալսարանի բյուջեում որպես պրակտիկայի կազմակերպման ծախսեր:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Համալսարանի ուսանողական խորհուրդը ուսանողության խնդիրներով զբաղվող ինքնակառավարման մարմին է, որի գործունեությունը սահմանվում է ՀՀ օրենքներով և համալսարանի կանոնադրությամբ: Ուսանողական խորհրդի նպատակներն են.

- ուսանողների շահերի և իրավունքների պաշտպանությունը,
- ռազմահայրենասիրական դաստիարակությունը,
- ուսումնակրթական և գիտական ոլորտներում աշխատանքների ծավալումը,
- ուսանողների ազատ ժամանցի կազմակերպումը,
- մարզական միջոցառումների կազմակերպումը,
- ուսանողներին տեղեկատվությամբ ապահովումը:

Ուսանողական խորհրդի գործունեությունը ֆինասավորվում է ՃՇՀԱՀ-ի տվյալ տարվա հաստատված բյուջեով նախատեսված միջոցներից և այլ աղբյուրներից:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Համալսարանում ուսանողների համար լրատվության աղբյուրներն են համալսարանի համացանցային կայքը (www.nuaca.am), ուսանողական խորհրդի ֆեյսբուքյան էջը, «Ինժեներ» պաշտոնաթերթը:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Համալսարանում գործում է ուսանողական գիտական ընկերություն, որի նպատակներն ու խնդիրներն են.

- աջակցել ուսանողների, երիտասարդ գիտաշխատողների և հետազոտողների գիտահետազոտական աշխատանքների իրականացման և ներդրման գործընթացին,
- ստեղծագործական ներուժի լիարժեք իրականացման համար համախմբել երիտասարդ գիտաշխատողների, դասախոսների, հետազոտողների, դոկտորանտների, ասպիրանտների, հայցորդների և ուսանողների գիտահետազոտական գործունեությունը,
- երիտասարդ գիտաշխատողների և մասնագետների համար ստեղծել բարենպաստ միջավայր,
- երիտասարդների շրջանում քարոզել գիտական արժեքները, կազմակերպել գիտահետազոտական փորձի փոխանակման միջոցառումներ,
- ապահովել միջազգային գիտական կազմակերպությունների, երիտասարդական կառույցների հետ համագործակցություն և անդամակցություն:

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

Համալսարանում գործում է կարիերայի կենտրոնը, որը ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է: Կենտրոնի հիմնական նպատակն է նպաստել համալսարանի առջև առաջադրված որակի բարելավման խնդիրների լուծմանը, աշխատանքային շուկայում ՃՇՀԱՀ ուսանողների և շրջանավարտների մրցունակության, շրջանավարտների և Համալսարանի միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության զարգացմանը:

Կենտրոնի գործառնություններն.

- ստեղծել Համալսարան-աշխատաշուկա համագործակցության հարթակ, իրականացնել տարբեր ձևաչափերով շփումներ,
- ստեղծել շրջանավարտների տվյալների բանկ,
- օժանդակել դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը,
- իրականացնել աշխատաշուկայի կարիքների վերլուծություն,
- օժանդակել բուհի կողմից առաջարկվող մասնագիտությունների բարելավման գործընթացին՝ հենվելով տարածաշրջանային գերակայությունների վրա,
- ստեղծագործաբար նպաստել բուհ-աշխատաշուկա համատեղ միջոցառումների, ծրագրերի իրականացմանը: